



ԱՌԼԵՆ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ

ԸՐՔՈՒՆՈՒ ԳԱՂՏԱԻՔԸ

ԱՌԼԵՆ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ԹՐՔՈՒՀՈՒ ԳԱՂՏՆԻՔԸ

Պատմվածք

Էլեկտրոնային գիրք, 37 էջ, Երևան, 2015 թ.

© Սույն էլեկտրոնային գրքի բոլոր իրավունքները պատկանում են հեղինակին և պաշտպանված են օրենքով

Arlen Shahverdyan, “The Secret of a Turkish Girl”
A story (in Armenian)

The e-Book is Copyright protected
© All Rights Reserved, 2015, Yerevan, Armenia



Գիրքը նվիրվում է Հայոց ցեղասպանության անմեղ զոհերի
հիշատակին և հրապարակվում է ի նշանավորումն
Ցեղասպանության 100-րդ տարելիցի

The book is dedicated to the innocent victims of the Armenian
Genocide and is published as a tribute to Centennial of the
Genocide

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումների պաշտոնական կայք
The official website dedicated to the Centennial of the Armenian Genocide

<http://armeniangenocide100.org/>



Գիրքը պաշտոնապես ներկայացված է հեղինակի
անձնական բլոգ-կայքում

The book is officialy presented in the author's
personal blog:

<http://arlen Shah.wordpress.com>

© Բոլոր իրավունքները պաշտպանված են, 2015

© All Rights Reserved, 2015

Սիրելի՛ բարեկամներ, պատիվ ունեմ ներկայացնելու ձեզ իմ նոր էլեկտրոնային գիրքը՝ «Թրքուհու գաղտնիքը» վերնագրով: Այս պատմվածքը ես գրել եմ երկու օրում՝ 2015 թ. ապրիլի 16-17-ը, սակայն սա իմ հոգում կուտակված երկար տարիների ապրումների ու հույզերի արդյունք է: Գիրքը նվիրվում է Հայոց ցեղասպանության անմեղ զոհերի հիշատակին և հրապարակվում է ի նշանավորումն Ցեղասպանության 100-րդ տարելիցի: Դուք կարող եք կարդալ գիրքը այստեղ՝ իմ հեղինակային բլոգում, այն հասանելի է բոլորին: Սա իմ համեստ, անկեղծ ու սրտազին վերաբերմունքի արտահայտությունն է իմ ժողովրդի ցավի և նրա ապրելու ու բարգավաճելու հույսի նկատմամբ:

Dear friends, I am honored to introduce my new e-book called “The Secret of a Turkish Girl” (*in Armenian*). I wrote this story in two days, from 16-17 April 2015, but this is a result of the feelings and emotions of many years, built up in my soul. I dedicate this book to the memory of the innocent victims of the Armenian Genocide, and it is published on the Centennial of the Genocide. The book is available to all here – in my author blog. This is expression of my humble and heartfelt attitude towards the pain of my nation and its hope of life and prosperity.

Дорогие друзья, для меня честь представить вам мою новую электронную книгу, под названием "Тайна турчанки" (*на армянском*). Этот рассказ я написал в течение двух дней, с 16-17 апреля 2015 года, но это результат многолетних переживаний и эмоций, которые накоплены в моей душе. Я посвящаю эту книгу памяти невинных жертв Геноцида армян. Книга публикуется к 100-летней годовщине геноцида. Вы можете читать мою книгу здесь - в моем авторском блоге, книга доступна для всех. Это скромное, откровенное и сердечное выражение моего отношения к боли моего народа и ее надежде на жизнь и процветание.

© Arlen Shahverdyan, 2015

URL: <https://arlen Shah.wordpress.com/>

ԱՌԼԵՆ ՇԱՀԿԵՐԴՅԱՆ

ԹՐՔՈՒՀՈՒ

ԳԱՂՏՆԻՔԸ

– Հայոց ցեղասպանությունն չի՛ եղել, – Թուրքիայի՝ իր պատմության հետ առերեսման ներկաների հորդորներին բավականին վրդովված պատասխանեց թրքուհի մասնակիցը Մյունխենի բարձրակարգ հյուրանոցներից մեկի կոնֆերանսների սրահում ընթացող «Ժողովուրդների երկխոսություն» խորագրով համաժողովի ընթացքում: Անգլերեն լեզվով ընթացող համաժողովի առաջին օրվա ծրագրում նախատեսված զեկուցումներին հաջորդում էին քննարկում, հարց ու պատասխան, և թուրք մասնակիցը հենց այդ տրամադրությամբ սկսեց իր խոսքը, երբ հայտարարվեց քննարկման մեկնարկի մասին:

Թրքուհու հայտարարությունից անմիջապես հետո բոլորը հայացքները ուղղեցին դեպի նա, ապա հայկական պատվիրակությանը՝ ինձ ու գործընկերոջս: Ես անմիջապես սեղմեցի դիմացս դրված բարձրախոսի կոճակը, որպեսզի պատասխանեմ այդ հայտարարությանը, սակայն Գիզեմ Նաշիթը, որ համաժողովի մասնակից երկրների շարքում Թուրքիան ներակայացնող երկու հոգանոց պատվիրակության երիտասարդ և ակտիվ անդամն էր, արագ շարունակեց իր խոսքը:

– Բավական է մարդկանց մոլորության մեջ զգեք: Ես ուշադիր լսեցի մեր գործընկերների ու հարգելի մասնագետների զեկուցումները, բոլորը միաբերան նշում են այսպես կոչված ցեղասպանության մասին: Դուք չեք ուզում հասկանալ, որ մարդկանց ընդամենը փորձել են տեղափոխել ավելի ապահով վայրեր: Ի վերջո, մի՛ մոռացեք, որ պատերազմ էր, քաոս, բնակչությանը տարահանել էր պետք, ես կասեի՝ փրկել, և եթե մի քանիսը չեն դիմացել դժվարին ճանապարհին, ապա դա չի նշանակում, որ իրականացվել է ցեղասպանություն:

Ձայն խնդրելով նախազահողից և միացնելով խոսափողս՝ ասացի:

– Հարգելի՛ Գիզեմ, Հայոց ցեղասպանություն եղել է, որքան էլ որ դուք չընդունեք դա: Իհարկե, հասկանալի է, որ ժողովուրդների երկխոսությանը նվիրված մեր այս պատվելի համաժողովին Ձեր՝ թուրքական, պատվիրակությունը շատ զգայուն պիտի գտնվեր իր ուղղությամբ հնչեցված նմանօրինակ ցանկացած արտահայտության նկատմամբ: Բայց հայտարարություններ անելիս, խնդրում եմ, մի՛ մոռացեք, որ պատմական փաստի, անհերքելի իրողության դրժումը, ուրացումը ինքնախաբեություն է, որը առաջին հերթին ձեզ է վնասում:

Իմ խոսքին միացավ հույն պատվիրակը, որն ասաց.

– Հարգելի՛ նախագահող, հարգելի՛ մասնակիցներ, իհարկե, հասկանալի է թուրքական պատվիրակության մղումը ամեն գնով օգտագործելու այս հարթակը՝ մեկ անգամ ևս հնչեցնելու, թե Հայոց ցեղասպանություն չի եղել, – և դիմելով թուրք մասնակիցներին՝ շարունակեց, – բայց, խնդրում եմ, բարի եղեք ցուցաբերել հանդուրժողականություն մեր մյուս գործընկերների նկատմամբ, որոնք նույնչափ իրավունք ունեն արտահայտելու իրենց կարծիքը, և եթե այն չի համընկնում ձեր կարծիքին, ապա չի նշանակում, որ պետք է վրդովվեք: Մենք այստեղ ենք բանավիճելու, ոչ թե թշնամանալու համար, հակառակը՝ պիտի փորձենք գտնել երկխոսության եզրեր: Ի վերջո, մի՛ մոռացեք, որ բացի հայ-թուրքական խնդրից, կա նաև հույն-թուրքական խնդիրը, հույների ցեղասպանության փաստը, հույները նույնպես զգալի չափով տուժել են Ձեր երկրի ու ժողովրդի գործողություններից:

– Հարգելի՛ նախագահող, իմ ցանկությունն էր՝ ընդամենը կոչ անել՝ զերծ մնալ քաղաքական անհիմն հայտարարություններից, որոնք լավ բանի չեն բերում: Ես պաշտպանում եմ իմ երկիրը, և դա բնական է, – պնդեց Գիզենը:

– Հարգելի՛ օրիորդ Նաշիթ, – ասաց նախագահողը, – հասկանալի է, շնորհակալություն: Պաշտպանվելու կարիք չկա, քանի որ որևէ մեկը գիտական կամ հանրային քննարկման ժամանակ որևէ ագրեսիա չի ցուցաբերում նույն հարթակում հանդես եկող մեկ այլ մասնակցի նկատմամբ: Մենք այստեղ ծավալում ենք գիտական քննարկում, սա գիտական հարթակ է, այն պետք է անաչառ լինի և անկողմնակալ...

– Եվ Դուք խոսում եք անկողմնակալ լինելուց..., – շարունակեց Գիզենը, – առավոտվանից այստեղ ներկայացված գրեթե բոլոր զեկուցումներում բազմիցս մեղադրանքներ հնչեցին իմ երկրի հասցեին, հիմա էլ այս ցեղասպանություն կոչվածն եք քննարկում, սա՞ է անկողմնակալությունը:

Ջգացվեց, որ նախագահողը հազիվ էր իրեն զսպում, որպեսզի նկատելի կոշտ վերաբերմունք չցուցաբերի թրքուհու՝ հուզումնառատ, ոգևորված և համառորեն շարունակվող խոսքի հանդեպ: Դրա համար նա բավական հանդարտ ձայնով ասաց.

– Պատմական փաստերը, իրական եղելությունը անհնար է ձևախեղել, պետք է անցյալին ընդառաջ գնալու համարձակություն ունենալ: Որևէ մեկը այստեղ մեղադրանք չի հնչեցնում: Մենք այստեղ քննարկում ենք ժողովուրդների ու պետությունների միջև հարաբերությունների, երկխոսությունների հնարավորությունները: Այլ կարծիքներ, – շեշտված հնչեցրեց նա՝ ասես հասկացնելով թե՛ Գիզեմին, թե՛ մյուսներին, որ բավական է շարունակել այս թեմայով:

Այնպես չէ, որ հաջորդող քննարկումը թուրքիային չանդրադարձավ. մասնակիցները խոսեցին և՛ թուրքիայի՝ եվրոպական արժեքներին անհամապատասխանության, և՛ Կիպրոսի խնդրի, և՛ Մերձավոր Արևելքում թուրքիայի վարած քաղաքականության մասին:

Թուրքական պատվիրակության տարիքով ու պաշտոնով ավագ ներկայացուցիչը փորձեց համառորեն հերքել ամենը, ու հիմնականում նա էր բանավիճում, իսկ Գիզեմը լռում էր: Ես աննկատ գնում էի նրան՝ փորձելով հասկանալ թե այդ պահին ի՞նչ էր մտածում այդ աղջիկը: Գիզեմը 28-30 տարեկան, խնամված, նկատելի գեղեցկությամբ բարեկազմ աղջիկ էր, համաժողովի ամենահմայիչ մասնակիցներից մեկը: Զգացվում էր, որ նա շատ լավ գիտի իր արտաքին տեսքի գրավչության մասին, զգացվում էր նաև, որ գիտեր գնահատել իրեն ու պատեհ առիթի ժամանակ գործի էր դնում իր կանացի հմայքը՝ մի որևէ «անմեղ», սակայն ընդգծված քնքուշ հայացքով կամ շարժումով: Երևում էր, որ նա մեկն էր այն «պատրաստված» պատվիրակներից, որ չնայած իրենց երիտասարդ տարիքին, արդեն այնպիսի կրող են իրենց երկրի քաղաքականության, որ կոնկրետ ու անվերապահորեն գալիս են իրականացնելու իրենց տրված հանձնարարությունը, այն «առաքելությունը» որի համար մեկնում են ու մասնակցում զանազան սեմինարների, դասընթացների, ժողովների, ֆորումների: Եթե այդ ամենին գումարենք նաև այն, որ Գիզեմը ներկայացնում էր թուրքիայի կառավարության աշխատակազմը և զբաղված էր տեղեկատվական-քարոզչական աշխատանքով, ապա պարզ էր, որ այդ համակրելի ու բարեկիրթ օրիորդի արտաքին տեսքի տակ իր պետության շահերն ու քաղաքականությունը ամեն գնով պաշտպանող պետական ծառայող էր:

Նրան աննկատ զննելու ժամանակ մեր հայացքները մի պահ պատահաբար հանդիպեցին, նա ինձ ուշադիր նայեց ու խորհրդավոր ժպտաց:

Քննարկման ավարտին նախագահողն ասաց.

– Հարգելի՛ ներկաներ, ծրագրի համաձայն՝ համաժողովի մասնակիցներն այժմ պետք է բաժանվեն խմբերի: Յոթական հոգուց բաղկացած այդ խմբերում կքննարկվեն մեր համաժողովի ընթացքում արժարժված թեմաները: Հիշեցնեմ, որ համաժողովի ավարտին, այսինքն՝ երկու օրից, յուրաքանչյուր խումբ պետք է հանդես գա զեկուցմամբ, թե ինչպես է պատկերացնում համաժողովում արժարժված խնդիրների լուծման ուղիները, ինչ վերլուծություններ, կանխատեսումներ և առաջարկություններ ունի: Հիշեցնեմ, որ խմբերի քննարկումները անցկացվելու են այս նույն հյուրանոցի առանձին սրահներում: Յուրաքանչյուր խումբ ղեկավարվելու է մեր հիմնական զեկուցողներից մեկի կողմից: Նրանք արդեն ընտրված են: Խմբի քննարկումների արգասիքը մեր գործընկերներին պետք է ներկայացվեն «*Power Point*» ձևաչափով: Ձեզ կտրամադրվի անհրաժեշտ տեխնիկա, մեր համաժողովի ադմինիստրատիվ աշխատակիցները պատրաստ են սիրով օգնել ձեզ ցանկացած հարցում:

Ծրագրով նախատեսված էր, թե համաժողովի մասնակիցներից ով ո՞ր խմբում պետք է լինեն, և այնպես էր ստացվել, որ ես ու Գիզենը նույն խմբում էինք: Երբ ես կարդացի մեր խմբի մասնակիցների ցուցակը, մտածեցի, որ հավանական է՝ կազմակերպիչները միտումնավոր էին այդպես բաժանել, որպեսզի հայ և թուրք ներկայացուցիչները հնարավորություն ունենային խոսելու իրենց հարաբերություններին խոչընդոտող հարցերի շուրջ: Հնարավոր է, որ բաժանումը պատահական էր արվել: Ինչևէ, արդեն փաստ էր, որ առաջիկա երկու օրերին ես ու Գիզենը պետք է աշխատեինք նույն խմբում:

Երբ մասնակիցները բաժանվեցին խմբերի ու նրանց ցույց տրվեց, թե ո՞ր խումբը հյուրանոցի ո՞ր սրահում, սենյակում կամ լսարանում պետք է աշխատի, ես նկատեցի Գիզենի հայացքը. նա ուշադիր զննում էր ինձ: Չգիտեմ՝ հավանե՞լ էր ինձ, թե՞ զգուշանում էր: Դժվար էր հասկանալ: Ամեն դեպքում զգացվում էր, որ նրա մտքերը հակասական էին, ոչ միանշանակ: Ինձ թվաց անգամ, որ նա խուսափում էր՝ հավա-

նաբար վստահ լինելով, որ իմ կողմից իր հասցեին կհնչեն մեղադրանքներ կամ կոպիտ արտահայտություններ: Բարեվարքության և կնամեծարության սկզբունքներս երբեք թույլ չէին տա ինձ ճնշել կնոջը կամ դնել նրան վատ վիճակի մեջ: Սակայն, մյուս կողմից, ընդհանրապես անտեսել Գիզեմի ինչ-որ տեղ սադրիչ պահվածքն ու արտահայտությունները՝ հնարավոր չէր: Պետք էր ուղղակի չտրվել սադրանքին ու հավասարակշիռ, խելամիտ պահվածքով հնարավոր զարգացումներն ու թուրք ներկայացուցչի բավական զգայուն ու անգամ ագրեսիվ պահվածքը խաղաղեցնել՝ շփումը, քննարկումն ուղղելով ավելի կառուցողական, արդյունավետ ու շահեկան հուն:

Սակայն քննարկման առաջին իսկ րոպեից պարզ դարձավ, որ Գիզեմը զիջել չի պատրաստվում ու բավական լարված է այն հանգամանքից, որ խմբում հայ կա: Երբ խմբի մասնակիցները ներկայացրեցին իրենց ու սկսվեց քննարկումը, խմբի ղեկավարը նշեց այն շահեկան հանգամանքը, որ խմբում կան հայ ու թուրք մասնակիցներ, և որ նրանց համար այս հարթակը առանց նախապայմանների երկխոսելու հրաշալի հնարավորություն է: Հենց այդ խոսքին վրա բերելով՝ Գիզեմն ասաց.

– Ես չեմ կարող ու չեմ պատրաստվում երկխոսել մի մարդու հետ, որի պետությունը համառորեն ուզում է ինձ համոզել, որ իմ պապերը մարդասպան են եղել: Դու՛ք, օրինակ, – խոսքը ուղղելով խմբի գերմանացի ղեկավարին՝ ասաց նա, – ինչպե՞ս կզգայիք:

Սակայն հենց այդ վայրկյանին էլ Գիզեմը զգաց, որ ում-ում, բայց խմբի ղեկավարին այդպիսի հարց տալը սխալ էր: Մինչև նա հասկացավ, որ հարցի համար սխալ հասցեատեր էր ընտրել, խմբի ղեկավարը պատասխանեց.

– Եթե հարցը անձամբ ինձ եք տալիս, ապա թե՛ ես, և թե՛ իմ հայրենակիցները կարողացել ենք մեր մեջ բավարար չափով համարձակություն գտնել, որպեսզի ընդունենք, որ հրեաների հանդեպ մեր պապերը իրականացրել են ցեղասպանություն: Այնպես որ, երևի այդ հարցը ինձ տալ պետք չէր:

– Կներեք, – ասաց Գիզեմը, և ես հասկացա, որ այդ օրհորդն այնքան էլ անթերի, անխոցելի պատրաստվածություն չունի:

Քննարկման առաջին իսկ թույլից պարզ դարձավ, որ այդ աղջիկը շատ հեշտությամբ կարող է շփոթվել, ընկնել շփոթության մեջ, թույլ տալ սխալներ:

Փորձելով ուղղել իր սխալը՝ Գիզենը ներքին ամբողջ վրդովմունքը ուղղեց ինձ՝ ասելով.

– Այ՛ Դուք, այս համաժողովին մասնակցում եք ինչի՞ համար, որպեսզի Ձեր ազգի ու պետության շահերը պաշտպանեք, այնպես չէ՞: Հետևաբար ինչո՞ւ եք զարմանում, որ պիտի լսեք նաև հակառակ կարծիքը:

– Հարգելի՛ս, ես ոչ միայն չեմ զարմանում, որ այդ հակառակ կարծիքը կա, – ասացի ես, – այլ հակառակը՝ կզարմանայի, եթե այն չլիներ, կզարմանայի, եթե Դուք չհերքեիք եղելությունը: Ես չեմ համարում սա անձի խնդիր, Դուք ներկայացնում եք Ձեր երկիրը, հետևաբար Ձեր երկրի մերժողական քաղաքականությունը:

– Հարգելի՛ մասնակիցներ, – միջամտեց խմբի ղեկավար Վելտենը, մի բարեշնորհ ու համեստ երիտասարդ փորձագետ, որին վստահված էր մեր աշխատանքի կազմակերպումն ու անցկացումը, – այսօր մենք այստեղ կուրվագծենք առաջիկա երկու օրերի մեր անելիքները: Եկեք ծանոթանանք, կիսենք համաժողովի բացումից մեր տպավորությունները, իսկ վաղը մեզ լիարժեք աշխատանքային քննարկում է սպասում, հուսով եմ՝ կծավալենք կառուցողական բանավեճ: Մեր խմբի առջև դրված է երկու թեմա՝ «Հայոց ցեղասպանություն» և «Իրավիճակը Սիրիայում»:

Երբ Վելտենը խոսքն ավարտեց, Գիզենը վրդովված վեր կացավ ու ցուցադրաբար լքեց լսարանը:

Մի պահ լռություն տիրեց:

– Կարծում եմ, – ասաց Վելտենը, – որ մեր գործընկերոջը դուր չեկավ, որ խմբի օրակարգում ընդգրկված է Հայոց ցեղասպանության հարցը: Ես հասկանում եմ, որ միգուցե իրեն հաճելի չէ, սակայն սա հաստատված ծրագիր է, ես ոչ կարող եմ փոխել այն, ոչ էլ իրավասու եմ դա անելու:

Խմբի մյուս անդամները, որոնց թվում կային ներկայացուցիչներ Բուլղարիայից, Կանադայից, Ռուսաստանից, Ռումինիայից և Եգիպտոսից, վրդովվեցին Գիզեմի պահվածքից՝ շեշտելով, որ պետք է հանդուրժողականություն ցուցաբերել, և որ բոլորն այդտեղ են արդյունավետ քննարկման համար, ոչ թե հաշիվներ պարզելու:

Ինչևէ, մեր խմբի առաջին ծանոթացում-հանդիպումը մի պահ ընդհատվեց այդ անախորժ դրվագից, բայց հետո շարունակվեց, խմբի անդամները ներկայացրին իրենց, ծավալվեց հետաքրքիր զրույց, բոլորն էլ արտահայտեցին շատ հետաքրքիր մտքեր և, որ ամենակարևորն է, ամբողջ զրույցն ընթացավ բավական կառուցողական, բարիդրացիական ու նույնիսկ ջերմ մթնոլորտում: Չխուսափեցինք անգամ հումորից, որը մեկ-մեկ համեմուն էր զրույցը:

Երեկոյան ես և մեր պատվիրակության մյուս անդամը զբոսնում էինք քաղաքում: Մյունխենի շատրվանների, արձանների ու շենք-շինությունների շքեղ լուսավորությունը կարծես թրատում է սև երկինքն ու հաղորդում խորհրդավոր ու գեղեցիկ տրամադրություն: Ամեն բան դյութիչ էր ու մեղեդային: Այնպիսի տպավորություն էր, որ ամենուրեք, մեզ շրջապատող երեկոյան Մյունխենի բոլոր տեսարաններում, բոլոր անկյուններում հնչում էր մի գեղեցիկ ու մեղմ երաժշտություն: Այն, կարծես, լսելի էր թե՛ լայն փողոցներն ու նեղլիկ նրբանցքները երիզող զոդտրիկ շենքերի պատուհաններից, թե՛ բացօթյա սրճարաններում ու ռեստորաններում, թե՛ փողոցով անցնող մեքենաների ազդանշաններում ու հեծանվորդների լույսերի մեջ, թե՛ պանդոկներում, ուր եփվում էին անուշահամ նրբերշիկներ:

Քայլում էինք ու զմայլվում, մեզ համակել էր մի թեթև ու բարի տրամադրություն:

Հանկարծ մեր դիմաց նկատեցի Գիզեմին: Նա ընդառաջ էր գալիս ինձ: Մենակ չէր, նրա հետ էին իրենց պատվիրակության մյուս ներկայացուցիչը և համաժողովի երկու այլ կին մասնակիցներ՝ մեկը, կարծեմ, Շվեդիայից, մյուսը՝ Էստոնիայից:

- Բարի երեկո, – մոտենալով մեզ՝ առաջինը դիմեց Գիզեմը:
- Բարի երեկո, – հարգալից ողջունեցինք նրանց:

– Ջրոսնո՞ւմ եք, – հարցրեց նա այնպես, ասես ցերեկը այդ միջադեպը չէր էլ եղել:

– Փորձում ենք վայելել գիշերային Մյունխենը, – ժպտալով ասացի ես:

Մի քանի բառ փոխանակելուց և միմյանց հաճելի երեկո մաղթելուց հետո բաժանվեցինք: Ես մի պահ հետ շրջվեցի ու նկատեցի Գիզեմի հայացքը իմ ուղղությամբ:

– Երևում է, որ դուրը շատ ես եկել, – ասաց գործընկերս:

– Շատ ուրախ եմ նրա համար, – կատակեցի ես, ծիծաղեցինք ու շարունակեցինք մեր զբոսանքը:

Երբ վերադարձանք հյուրանոց, որտեղ մնում էին համաժողովի բոլոր մասնակիցները, ընդունարանով անցնելիս նորից նկատեցի Գիզեմին, նրանք ավելի շուտ էին վերադարձել: Միմյանց գլխով ողջունեցինք, և ես բարձրացա համարս:

Համացանցից փորձեցի հնարավորինս շատ բան իմանալ Գիզեմի մասին, մտա նաև նրա ֆեյսբուքյան պրոֆիլը, դիտեցի նկարներն ու կարդացի անգլերեն գրառումները: Մի տեղ էր միայն, որ մի քանի օր առաջ նշել էր առաջիկա համաժողովին մասնակցելու մասին:

Առավոտյան խմբի անդամները շտապեցին լսարան: Լսարան տանող միջանցքում սուրճի և թեյի ապարատներ կային, ու բոլորն օգտվում էին դրանցից:

Երբ մոտեցա ու բարի լույս ասացի մի քանի ժամանաժներին, տեսա նաև Գիզեմին, որը թեյ էր խմում ու զրուցում խմբի անդամներից մեկի հետ: Նրանք նստած էին բազմոցին: Գիզեմը նոր զգեստ էր հագել, այն բավական կարճ էր և ընդգծում էր նրա ոտքերի գեղեցկությունը: Վստահորեն իմանալով այդ մասին՝ նա այնպես էր նստել, որ ընդգծվեն նրա իրանի բարեկազմությունը, կոնքերը և ոտքերը: Երբ նա ինձ նկատեց, ժպտաց ու մի թեթև շարժվեց մարմնով՝ թեքվելով իմ կողմն ու փորձելով գրավել ուշադրությունս, կարծես ջանալով հնայել ինձ: Այդ շարժումով օրհորդը հասկացրեց, որ իրեն հատկապես հաճելի են իմ ողջույնը և ներկայությունը:

Ես նույնպես սուրճ վերցրի և նստեցի կողքի բազմոցին՝ զրուցելով կանադացի կին մասնակցի հետ: Շատ բանիմաց ու գրագետ կին էր, որը քաջատեղյակ էր թե՛ Թուրքիայի, թե՛ Հայաստանի, թե՛ ցեղասպանության խնդրին, թե՛ ընդհանրապես աշխարահուժ տիրող իրավիճակին:

Մեր զրույցի ամբողջ ընթացքում, մինչև կհավաքվեին մյուսները, ես անընդհատ զգում էի Գիզեմի թաքուն հայացքը՝ առանց նրան նայելու, քանի որ ուշադիր տղամարդը զգում է կնոջ ընդգծված նույնպիսի ուշադրությունը: Եղավ անգամ մի պահ, որ իրար նայեցինք: Այդ պահին նա, ուղիղ աչքերիս մեջ նայելով, ոտքը այնպես շարժեց, որ գեղեցիկ ու կարճ շրջազգեստի տակից մի փոքր ավելի նկատելի լինի իր գեղեցիկ ազդրը: Սակայն, որքան էլ Գիզեմը փորձում էր սեթևեթանքով կամ հայացքով իր կողմը գրավել իմ ուշադրությունը կամ, միգուցե, նաև համակրանքն ու բարեհաճությունը, միևնույն է, կանացի գեղեցկության նկատմամբ իմ՝ որպես տղամարդու, զննող ու գնահատող հայացքից բացի ավելիին նա չէր հասնում: Այո, նրա գեղեցկությունը կգնահատեր ցանկացած առողջ տղամարդ, և իմ աչքից էլ, բնականաբար, չվրիպեց: Սակայն դրանից ավելին իմ կողմից անկարելի և անընդունելի էր, ինչը հավանաբար ներքուստ զգում էր նաև ինքը՝ Գիզեմը: Բացի այդ, ես լուրջ չէի ընդունում, որ նա կարող էր հավանել հայի, այն դեպքում, երբ այդքան դյուրագրգիռ ու ագրեսիվ էր իմ հայ լինելու նկատմամբ:

Երբ խումբը հավաքվեց, Վելտենը հիշեցրեց աշխատանքային քննարկման թեման՝ Հայոց ցեղասպանություն, և խնդրեց լինել առավելագույնս հարգալից միմյանց նկատմամբ, ելնել կառուցողական, հանդուրժողական դիրքերից: Նա նաև նշեց, որ քննարկման սկզբում ուզում է արտահայտվելու և, թեկուզ, բանավիճելու հնարավորություն տալ մեզ երկուսիս՝ ինձ ու Գիզեմին, որպեսզի մենք արտահայտենք այն ամենը, ինչ ուզում ենք, մանավանդ որ դա հնարավորություն կտա խմբի մյուս մասնակիցներին՝ լսելու երկու կարծիքները, դրանք համադրելու, համեմատելու և ավելի զինված ու տեղեկացված, ավելի լիարժեքորեն մասնակցելու քննարկմանը:

– Հարգելի՛ մասնակիցներ, – ասաց Գիզեմը, որի ձայնը մի փոքր ավելի մեղմ էր, քան մի օր առաջ, – հասկանում եմ, որ պիտի քննարկենք դա, սակայն քննարկել մի բան, որը ես չեմ ընդունում, չեմ համարում

ճիշտ: Ես իմ դիրքորոշմամբ, հնարավոր է, խանգարեմ ձեզ՝ Թուրքիան և թուրք ժողովրդին վիրավորելու կամ որպես չարիք որակելու ձեր անթաքույց ցանկության մեջ: Ես պիտի նորից կրկնեմ այն, ինչը ասացի համաժողովի առաջին օրը, նիստի ժամանակ: Ես համոզված եմ, որ ոչ մի ցեղասպանություն չի եղել, այդ բոլոր զոհերը, որոնց կապակցությամբ իր ցավակցությունն է հղել իմ երկրի վարչապետը, ուղղակի տեղափոխությունների, զանգվածային անկարգությունների զոհեր են: Այո՛, եղել են սպանություններ, սակայն սպանվել են ոչ միայն հայեր, այլև թուրքեր: Այնպես որ, ես համոզված եմ, որ պատերազմի ժամանակ իր քաղաքացիներին տարահանելու ու փրկելու՝ իմ երկրի բարի կամքը այլ կերպ է մեկնաբանվում արդեն քանի տասնամյակ:

– Հայոց ցեղասպանություն եղել է, – խիստ ծայրով ասացի ես, – և այդ բոլոր զոհերը սոսկ տեղահանության հետևանք չեն, մարդկանց սպանել են, ընդ որում՝ լիովին անմեղ մարդկանց, սպանել են նրա համար, որ նրանք հայ են, բնաջնջել են, որպեսզի նրանք անհետանան: Հայոց ցեղասպանությունը ճանաչել և ընդունել են աշխարհի բազմաթիվ պետություններ ու միջազգային կառույցներ, օրենսդիր մարմիններ ու միություններ, հոգևոր առաջնորդներ, պետական, քաղաքական գործիչներ, արվեստի ներկայացուցիչներ: Ի վերջո, թուրք ժողովուրդն էլ է ճանաչել ու ճանաչում, իսկ ժամանակին նաև դատել է հանցագործության կազմակերպիչներին: Այսօր էլ ձեր հասարակության մեջ քիչ չեն մարդիկ, որոնք ոչ միայն ընդունում են դա, այլև ամաչում են տեղի ունեցածի համար ու ներողություն հայցում: Մինչդեռ ձեր պետությունը շարունակում է ոչնչի չտանող մերժողական քաղաքականությունը: Եվ գիտե՞ք ինչու...

– Ինչո՞ւ, – անկեղծ հետաքրքրությամբ ու դեռատի օրիորդին հատուկ՝ դեմքի իրապես անմեղ արտահայտությամբ՝ հարցրեց Գիզեմը: Զգացվեց, որ մի պահ ինքն էլ է ուզում խորապես հասկանալ թե՛ դիմացինին, տվյալ դեպքում՝ ինձ, թե՛ խնդիրը առհասարակ:

– Որովհետև ճանաչելով ու ընդունելով, որ ցեղասպան նախնիներ ու ցեղասպան քաղաքականություն եք վարել, չեք կարող խուսափել պահանջատիրական ալիքից, չեք կարող խուսափել փոխհատուցումից, ինչը թույլ չտալը ձեր երկրի համար ավելի կարևոր խնդիր է այսօր, քան

անգամ բուն ճանաչումը: Գիզեմ, մի հարց ունեն Ձեզ... ես համացանցից իմացա, որ Ձեր անունը նշանակում է «գաղտնիք», «խորհրդավորութուն», «հանելուկ»... Դուք մի՞թե չեք ուզում բացահայտել տասնամյակների Ձեզանից գաղտնի պահած այդ իրողությունը, բացահայտել այն գաղտնիքը, ինչը Ձեզանից ու Ձեր սերունդներից հետևողականորեն թաքցրել են անցած դարից, իսկ Դուք էլ կուրորեն հավատացել եք լավ մշակված ու կեղծված այն «ճշմարտությանը», որը հրամցվել է Ձեզ...

– Հարգելի՛ս, – արդեն ընդգծված մեղմ ձայնով, որի մեջ հազիվ նկատելի խոնարհություն կար, ասաց Գիզեմը, – նորից եմ կրկնում. մարդկանց տեղափոխել են այլ վայրեր, հիմա նրանք ճանապարհին հյուծվել են, թե չեն դիմացել, դա այլ հարց է: Մեկը հիվանդացել է, մյուսը՝ հոգնել, մարդիկ տարբեր են...

– Իսկ դուք չե՞ք հոգնում տասնամյակներ շարունակ նույն ձայնասկավառակը դնելուց ու լսելուց: Չէ՞ որ աշխարհը փոխվել է, Գիզեմ, մարդիկ ուրիշ են արդի աշխարհում: Այսօր քողարկելն ու ստելը շատ ավելի դժվար են դարձել, տեղեկույթը հասանելի է անգամ երեխայի համար՝ հաշված վայրկյանների ընթացքում: Այսօր սոցիալական մեդիան, տեղեկատվական տեխնոլոգիաները հնարավորություն են տալիս հաղորդակից դառնալու այնպիսի տեղեկույթի, որը նախկինում, դժվարամատչելի, անհասանելի կամ «լավ քողարկված» էր: Փոխվել է մարդկանց որակը: Այ, նույն Ձեր երկրում տեսեք, մի՞թե դուք ականատես չեք, թե որքան է փոխվում Ձեր հասարակությունը, որքան են նրան սկսել հուզել Հայոց ցեղասպանության հարցը և այդ մասին ավելի շատ բան իմանալը, բազմաթիվ այլ հարցեր, որոնք միշտ փակի տակ են եղել: Մի՞թե չեք նկատում, որ այսօրվա թուրք աշակերտը անգամ մի քանի տարի առաջվա աշակերտը չէ, և նրան դպրոցական հետևողական ծրագրով պատմության խեղաթյուրված գիտելիքներ սերմանելը չի ունենում նույն այն էֆեկտը, ինչ տասնամյակներ առաջ: Մի՞թե չեք նկատում հասարակական այն համակրանքը, որն առկա է Ձեր պատմության, Ձեր անցյալի կնճռոտ էջերի մասին համարձակորեն խոսող Ձեր իսկ հայրենակիցների նկատմամբ: Մի՞թե կարծում եք, որ պետական կամ լրատվական մակարդակով նրանց հալածելը, արտաքսելը երկրից, ճնշելը կարող են մինչև վերջ ազդել այսօրվա աշխարհի քաղաքացու վրա ու լռեցնել

նրան, վախեցնել, քաղաքացի, որը շատ ավելի ազատական ու համարձակ է, շատ ավելի զինված ու տեղեկացված, քան կես դար, մի դար առաջ: Ասածիս վառ վկայությունը բնապահպանական ու քաղաքացիական այն ակտիվացումներն են, որոնք բառացիորեն ցնցում են Ձեր երկիրը:

– Գեղեցիկ էք խոսում, գնահատում եմ, որ խոսում եք նաև մեր հասարակության ընկալումների կամ տրամադրությունների մասին, մեր հասարակությանը հուզող խնդիրների մասին, Հրանտ Դինքն էլ էր մտահոգված, որ մեր երկիրը զարգանա ու ազնիվ, բաց ճակատով նայի աշխարհին: Դուք էլ հավանաբար հետևում եք ու, վստահ եմ, որ լավ տեղեկացված եք, – ասաց Գիզեմը, – սակայն որքան էլ ջանք գործադրեք մարդկանց տեղափոխությունները մի վայրից մյուսը որպես ցեղասպանություն որակելու համար, միևնույն է, չի ստացվի:

– Իսկ այդ, ինչպես դուք եք ասում, տեղափոխությունների ընթացքում պարտադիր էր մարդկանց մորթելը, – հարցրի ես՝ ուղիղ նայելով Գիզեմի աչքերին:

– Ներեցե՞ք, – շփոթվեց նա իմ ուղիղ հարցից:

– Ասում եմ, երբ մարդկանց տեղահանում են իբր բարի նպատակներով, ապա արդյո՞ք Ձեր այդ նշած ապահով տեղափոխությունը նշանակում է մարդկանց ստորացնել, սովամահ անել, խոշտանգել, բռնաբարել, մորթել, կենդանի-կենդանի այրել, գնդակահարել, կախել... Դա՞ է ենթադրում ապահով տեղափոխությունը:

– Դե, գիտեք ինչ կա, – մի տեսակ վրդովվեց Գիզեմը, – հիմա Դուք այնպիսի բաներ եք ասում...

Նրա ձայնը դողաց մի պահ, բայց արագ վերագտավ իրեն ու շարունակեց.

– Սրտաճնլիկ բաներ ասելով ու զարհուրելի տեսարաններ հորինելով՝ պետք չէ բոլորին զցել շփոթության ու թյուրըմբռնման մեջ:

– Հորինված տեսարաններ՞, – հարցրի ես, – Դուք անմասն եք մնացել փաստերից, որոնք անթիվ են, և որոնք, ի դեպ, այսօր հասանելի են նաև Ձեր երկրում, շատ ավելի հասանելի, քան նախկինում, դրան հավելենք նաև համացանցը, վերապրածների վկայությունները, և այլն, և այլն:

– Ոչ մի վկայություն չի կարող ստիպել ինձ փոխել իմ կարծիքը, հարգելիս: Հայերի զանգվածային, միտուննավոր ջարդ ու կոտորած չի եղել: Հայերը և տարբեր այլ ազգեր զոհ են գնացել Առաջին աշխարհամարտի տարիներին, պատերազմի ժամանակ, – կրկնեց թրքուհին:

– Հարգելի՛ Գիզեմ, ասում եք, թե ընդամենը տեղափոխել են հայերին: Պատկերացրեք այսպիսի մի իրավիճակ... Ձեզ, Ձեր աղջիկ երեխայի հետ, բազմաթիվ այլ տարահանված կանանց հետ միասին, արդեն քանի օր է՝ բռնի քշում են անապատով, սոված, ծարավ, հյուծված, հոգնած, վերքերից ու զրկանքներից տառապած: Ճանապարհին Ձեր վրա ծիծաղում են, ծաղրում, հայիոյում, հրում, խփում ու հրամայում՝ ինչ անել, ո՞ր կողմը գնալ: Հայրենակիցների Ձեր այդ խումբը հասնում է մի տեղ, և Ձեզ ստիպում են նստել հողի վրա, իբր հանգստանալու: Դուք նկատում եք, որ ճանապարհի ամբողջ ընթացքում Ձեզ զենքերով առաջ քշող մարդկանցից մի քանիսը հետևում էին Ձեզ ու մի տեսակ գազանային ախորժակով նայում Ձեր ու Ձեր 12-ամյա աղջկա ուղղությամբ, նայում, քանի որ Դուք առանձնանում էիք Ձեր հայրենակցուհիներից կանացի գեղեցկությամբ ու հմայքով:

Երեկոյան բոլորը հոգնած ու հյուծված, վնասված ու քերծվածքներով, սոված ու ծարավ հանգրվանել են հողի վրա, փշերի ու քարերի մեջ: Կողքին վրաններ են խփել թուրք զինվորականները: Նրանք կուշտ սնվում են, թղթախաղով զվարճանում, հարբում:

Ահա մի քանիսը դուրս են գալիս վրանից ու մոտենում են ձեզ: Կանայք ու աղջիկները սկսում են վախից լաց լինել: Մոտեցողները սկսում են զննել բոլորին ու որս անող բորենիների նման ընտրում են իրենց պոտենցիալ զոհին և դա... Դուք եք ու Ձեր աղջիկը: Ձեզ բոլորի աչքի առաջ քաշում են դեպի վրանը: Դուք ճչում եք ու փորձում ազատվել, բայց դիմադրել մի քանի տղամարդկանց չեք կարողանում: Վրանի ներսում Ձեզ շարտում են հատակին: Ձեր աղջկան Ձեզանից խլում են, տղամարդկանցից մեկը ամուր բռնում ու քաշքշում է նրան: Այդ տականքի ահարկու տեսքից երեխան սարսափած լաց է լինում, նա ահից լեղապատառ է եղել: Դուք փորձում եք հասնել Ձեր երեխային ու պաշտպանել նրան, հետ խլել, բայց Ձեզ շրջապատում են ու սկսում պատռել Ձեր հագուստը: Դուք վախից կուչ եք գալիս: Այդ տականքները ինչ-որ

բաներ են խոսում, հրճվում, ծիծաղում: Դուք չեք հասկանում, թե ինչ են նրանք ասում, Ձեզ զգվելի են նրանց դեմքերը, խոսքերը, ծիծաղը, հպումները... Նրանց աչքերը փայլում են գազանային փայլով, հեշտ զոհին տիրելու հնարավորությունից խանդավառված: Ձեզ ստիպողաբար ծնկի են իջեցնում: Այդ ընթացքում անընդհատ լսվում է ձեր երեխայի աղեկտուր լացը: Խմբից մեկը ապտակում է Ձեզ ու ինչ-որ բաներ ասում, սպառնում: Հետո Ձեզ բարձրացնում են, քաշքշելով տեղափոխում դեպի վրանի մյուս անկյունը ու մեջքի վրա պառկացնում խմբի գազաններից մեկի քնատեղին: Մի քանի հոգով հարձակվում են ու Ձեր երեխայի աչքի առաջ բռնաբարում Ձեզ: Նրանք հարվածում են, հայիոյում ու հրճվում: Ծաղրում են Ձեզ, թե հայերդ քրիստոնյա եք ձեզ կոչում, և ո՞ւր է ձեր Աստվածը, որ գա ձեզ փրկի, պաշտպանի: Նրանք Ձեր վրա են, շարունակում են խոշտանգել ու բռնաբարել, նրանց համազգեստի փոշին լցվել է օդում ու Ձեր բերանն է լցվում, Դուք շնչահեղձ եք լինում: Փորձում եք ազատվել նրանց ձիրաններից, բայց չի ստացվում:

Ձեզ բռնաբարելուց հետո անցնում են Ձեր բալիկին ու Ձեր իսկ աչքի առաջ բռնաբարում նրան: Ձեր երեխան ճչում է ցավից ու վախից: Դուք խելագարված գոռում եք ու փորձում ազատվել Ձեզ պինդ պահող տականքներից, սակայն չի ստացվում, դրանցից մեկը սկսում է ծեծել Ձեզ, իբր պատժում է անհնազանդության համար:

Ձեր դեռատի, նուրբ ու քնքուշ աղջկան շարունակում են ամենաայլանդակ ու դաժան ձևով բռնաբարել, խոշտանգել, լափել ու լիզել: Դուք տեսնում եք՝ ոնց է Ձեր բալիկի ոտքերի արանքից արյուն հոսում ու լսում եք, թե ոնց է նա ոռնում ցավից ու լաց լինում: Սարսափից երեխան ուշագնաց է լինում: Նրան ապտակելով մի պահ ուշքի են բերում, ստիպում կանգնել, որ ոտքով գա Ձեզ մոտ: Դուք ողբում եք՝ նայելով Ձեր արյունաթաթախ բալիկին ու նրա նսեմացմանը: Երեխան չի կարողանում ոտքի վրա կանգնել և ուղիղ Ձեր առջև ընկնում է գետնին: Նրա փխրուն, անօգնական ու անզգայացած մարմինը բարձրացնում են նորից, որ քայլի, համոզվում են, որ երեխան ուշքից գնացել է, ու համարելով նրան արդեն իրենց խրախճանքի ու վայրագ խաղի համար ոչ պիտանի՝ Ձեր իսկ աչքի առաջ սպանում են: Դուք խելագարի պես գոռում եք, երբ տեսնում եք, թե ինչպես է մահանում Ձեր բալիկը՝ աչքերը Ձեզ ուղղած:

Խելակորույս ճչում եք ու փորձում սողալ դեպի երեխան: Ձեր մարմինը խոշտանգումներից ու հարվածներից այնպես է ցավում, որ չեք կարողանում շարժվել: Ձեզ չեն թողնում, որ դուք մոտենաք երեխային, նորից բարձրացնում են ու սկսում ծեծել: Ներկաներից մեկը ոտքով հարվածում է Ձեր երեսին՝ փորձելով փչացնել, վնասել, ապականել կանացի այն գեղեցկությունը, որով բնատուր օժտված եք Դուք: Նրան զայրացնում է Ձեր անձեռակերտ գեղեցկությունը: Նա բռնում են Ձեր մազերից ու քարշ տալիս գետնով մեկ, և Ձեր քերծված արմունկներից, ծնկներից ու երեսից հոսող արյունը թափվում է գետնին: Բայց դա էլ դեռ ամենը չէ: Շարունակելով հրճվել՝ խմբից մեկը հանում է իր մեծ սուր դանակը ու մի շարժումով բռնում ու կտրում Ձեր մի ստինքի ծայրը: Անասելի ցավից Դուք ոռնում եք ու, անկանոն շարժումներ անելով, փորձում ազատվել, պաշտպանվել ու փախչել միաժամանակ: Գազազած ու այդ հրճվանքից ոգևորված մարդասպանը հաջողացնում է կտրել նաև Ձեր մյուս ստինքի պտուկը: Ձեզ դուրս են շարտում վրանից, որպեսզի նայեն ցավից այս ու այն կողմ վազող ու արյունաքամվող Ձեր խելագարությանը և հրճվեն, ուրախանան, թե իբր որքան ծիծաղելի ու զվարճալի եք Ձեր խենթ վազքի մեջ:

Խոսելով այսպես՝ ես զգացի, որ Գիզենը գունատվում է: Նա քարացած լսում էր, լուռ ու հուզված լսում էին նաև խմբի մյուս անդամները, բուլղարուհին լաց էր լինում, արցունքները խեղդում էին նրան: Գիզենը քարացել էր, զգացվում էր, որ չափազանց հուզված է: Ես շարունակեցի.

– Դուք ասում եք, թե ընդամենը տեղափոխե՞լ են հայերին: Տեղափոխելու ժամանակ մի՞թե աքցանով պոկում են մարդու եղունգները, մի՞թե կենդանի-կենդանի մորթում են ու հրճվում, թե ինչպիսի տեսք ունեք առանց մաշկի, մի՞թե տեղափոխման ժամանակ մարդու իրավունքներն այնպես են ոտնահարվում, նսեմացվում, որ մարդն իրեն զգա ամենավերջին ոչնչություն ու անպետքություն: Ասում եք, թե ընդամենը տեղափոխե՞լ են հայերին: Մարդուն, որը հազարամյակներով ապրել ու արարել է իր Հայրենիքում, իր բնօրաննում, սկսում են հետապնդել ու հալածել, քշել իր տանից, կամ սպանել իր իսկ տան մեջ, ընտանիքի մյուս անդամների հետ միասին: Ասում եք, թե ընդամենը տեղափոխե՞լ են հայերին: Պատկերացրեք, որ Դուք փոքրիկ երեխա եք, որի ծնողներին

ճանապարհին արդեն սպանել են, և Դուք Ձեր ավագ հայրենակիցների հետ դեգերում եք անապատում, սոված, ահի ու սարսափի մեջ, արևի տակ, քանի որ է՝ ջրի մի կաթիլ չեք խմել, արևից ու քամիներից Ձեր մաշկը, շուրթերը չորացել են, վնասվել, ուռել: Մի քանի մեծահասակ թուրքեր հավաքում են Ձեզ ու բազմաթիվ այլ տեղահանված երեխաների մի տեղում ու սկսում են ծաղրել, քացով խփել, որ այս ու այն կողմ վազեք, հետո նրանցից մեկը հանում է հացի մի կտոր ու պարզում ձեր ուղղությամբ, ցուցադրում ձեզ: Դուք ուտելիք տեսնելով՝ աղերսագին ուղղվում եք դեպի նա ու պարզում ձեռքերը, որ հացը տա՝ ուտեք: Նա ձեր բոլորի աչքի առաջ սկսում է ծամել հացը, կերակրվել անասունի պես: Նայում եք, թե ինչպես է նա կուլ տալիս հացը, այդ երանելի հացը, որից քանի որ է՝ զրկված եք: Ձեր միջից մի փոքրիկ փորձում է մոտենալ ու մի կտոր ստանալ, սակայն այդ պահին ձեր բոլորի աչքի առաջ այդ այլանդակը հանում է իր ատրճանակն ու կրակում ուղիղ բալիկի ճակատին, գնդակի հարվածից նրա մարմինը երերում է ու վայր ընկնում, իսկ դուք սարսափահար ճչում եք. դա կարող էր լինել ձեզանից յուրաքանչյուրը:

Հաջորդ առավոտյան գորգորոցները արթնացնում են ձեզ, որպեսզի ոտքի կանգնեք ու շարունակեք ճանապարհը: Այդ պահին նկատում եք, որ գիշերը դեռ կենդանի եղած ձեր հայրենակիցների մի քանիսի գլուխները կտրված են ու դրված քարին, որպես զգուշացում ընդվզողներին ու չենթարկվողներին:

Հարգելի՛ Գիզեմ, Դուք այսքանից հետո էլի՞ համարում եք, որ մարդկանց պարզապես ապահով կերպով տեղափոխել են: Ինչպե՞ս եք, Գիզեմ, – դիմեցի նրան՝ տեսնելով, որ նա լուռ ու հուզված լսում է:

Գիզեմը վեր կացավ և հուզված ու շփոթված լքեց լսարանը: Ես գնացի նրա հետևից: Միջանցքում նրան չգտա: Արագ մոտեցա միջանցքի վերջում կանգնած մի քանի հոգու, որպեսզի հարցնեմ: Ասացին, որ տեսել են, թե ինչպես մի աղջիկ արագ մտավ զուգարան:

Վերադարձա լսարան: Վելտենը զրուցում էր խմբի մյուս անդամների հետ: Երբ նստեցի իմ աթոռին, նա ասաց.

– Այդ զարհուրելի տեսարանները լսելն անգամ անտանելի է, ուր մնաց, թե դրանց ականատեսը լինես: Դժվար է անգամ պատկերացնել, թե ինչ սարսափ են ապրել այդ բոլոր մարդիկ՝ այդպես դաժանորեն խոշտանգվելով: Ես մի անգամ առիթ ունեցել եմ լինելու Երևանում, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտում ու տեսել եմ այնտեղ այնպիսի փաստավավերագրեր ու նյութեր, այնպիսի լուսանկարներ, որոնց նայելիս մարմինդ փշաքաղվում է:

Թե՛ Վելտենը, թե մյուսները նկատեցին, որ ես ինքս այդ պահին ինձ լավ չէի զգում, քանի որ այդ ամենի մասին խոսելիս ես էլ էի հուզվել, դեմքս կարմրել էր: Ինձ ասացին, որ գնամ համարս ու հանգստանամ, որպեսզի վաղը միանամ քննարկմանը:

Ներողություն խնդրեցի, որ ստիպված եմ լքել ու դուրս եկա սրահից: Մինչև համար ճանապարհին մտածում էի, թե որքան ծանր ու ողբերգական է Հայոց ցեղասպանության հետքը, մի կողմից հայի վրա, որը այդ մասին խոսելիս ու պատմելիս է վատանում, մյուս կողմից՝ նույն թուրքի վրա, որը չկարողացավ մինչև վերջ լսել այն, ինչը իրականում տեղի է ունեցել: Այդ պահին համոզվեցի նաև, որ ցեղասպանության հարցը հրաշալի հնարավորություն է այն իրականացրած թուրքերի սերունդների համար, որպեսզի ընդունելով գործած մեղքն ու փոխհատուցելով այն՝ մաքրագործվեն ու աշխարհին ներկայանան որպես քաղաքակիրթ պետություն: Ցեղասպանություն ապրած հայերի սերունդների համար էլ ցեղասպանությունը չմոռանալը հնարավորություն է հզորանալու, միասնական լինելու՝ ցեղասպանության կրկնությունը բացառելու, այլևս երբեք ցեղասպանության չենթարկվելու համար:

Արդեն հյուրանոցի իմ համարում էի, երբ ինձ այցելեց իմ հայրենակից գործընկերս: Ասաց, որ իմացել է, որ Գիզեմը սրահից հուզված ու գունատված դուրս է եկել, շտապել է զուգարան ու փսխել: Ես համոզվեցի, որ առաջին օրը արտաքուստ անհողդողդ ու երկաթյա թվացող այդ աղջիկը իրականում զգայուն ու փխրուն մարդ է, որը կատարում է հանձնարարություն, այն է՝ խիստ, ագրեսիվ լինել հայերի նկատմամբ և ընդհանրապես բոլոր նրանց նկատմամբ, ովքեր Թուրքիային որևէ դեմ բան ասեն:

Ընկերոջս պատմեցի Գիզեմի հետ մեր այդ անախորժ խոսակցությունը:

– Ասում են՝ շատ է վատացել, – խոսքի մեջ ասաց ընկերս, – մինչև հիմա համարից դուրս չի եկել:

– Դա իր մեղքով չի, որ այդպես է եղել, բայց պատմական հիշողությունը գենով անցել է, և նա փսխել է այն մաղձը, որով նրան ու նրա հասակակիցներին փոքրուց սնուցել են ու թունավորել: Չի կարելի թշնամանք ու արգահատանք սերմանել այլ ազգի նկատմամբ, մի օր դա հետադարձվում է, տիեզերքը մի օր բուներանգում է դա: Եթե լավ բան անես, լավ մասնիկներ արտանետես՝ անպայման լավն է հետ գալիս մի որևէ մատերիայի կամ հոգևոր արժեքի տեսքով, եթե վատը, բացասականը արտանետես, հետ է գալու երիցս վատը:

– Բայց զգացի՞ր, թե ինչ կատարվեց. համաժողովի բոլոր մասնակիցները ընդունում են ցեղասպանության փաստը, – ասաց գործընկերս, – լավ է, որ էդ թուրքի վաստակը ազդվեց:

– Մի՛ կոպտիր, – ասացի ես, – պարզվեց՝ զգայուն ու փխրուն աղջիկ է:

– Բա էլ ինչի՞ համար նրան ասացիր այդ ամենը:

– Ես ուղղակի մի պահ չկարողացա այլևս տանել այդ ցինիկ մերժողականությունը: Կտեսնես՝ կգա մի օր, որ թե՛ այդ թրքուհին, թե՛ բազմաթիվ այլ թուրքեր ի վերջո չեն կարողանա այլևս խուսափել ու կընդունեն, և ոչ միայն կընդունեն, այլև կփոխհատուցեն, պիտի՛ փոխհատուցեն:

– Ի՞նչ պիտի փոխհատուցեն, գումա՞ր, հողե՞ր... քեզ թվում է, թե նրանք մի օր կգնա՞ն դրան, քեզ թվում է, որ նրանք լո՞ւրջ են ընդունում տարածքային պահանջատիրության արդար հարցը, – ասաց թերահավատ ընկերս:

– Իհարկե, լուրջ են ընդունում, անգամ վախենում են, թեև արտաքուստ ցուցադրում են հակառակը: Անշուշտ, լուրջ են ընդունում ու շատ լավ գիտակցում են, որ եթե իրենք ընդունեն ցեղասպանությունը, հայերը պահանջատեր են դառնալու:

Հայերն այսօր արդեն պահանջատեր են ու հետամուտ Հայ դատի արդարացի լուծմանը աշխարհով մեկ: Հասկացիր, անհնար է ապրել՝ ամբողջ կյանքը Մասիս սարը ուրիշի մոտ տեսնելով, այն ուրիշին չի պատկանում:

– Թե չէ որ Մասիս սարը մեզ պատկանի, ինչ է լինելու: Ի՞նչ է դա մեզ տալու, – քնծիծաղեց գործընկերս:

– Հարցը միայն այդ փառահեղ ու վեհասքանչ լեռը չէ, դրանից հոգեբանություն է փոխվելու, այլևս վերանալու է Մասիսին երանությամբ, կարոտով, ափսոսանքով ու տխրությամբ նայելու հայ մարդու հոգեվիճակը: Այսօր սարը տեսանելի է Հայրենիքի մի հատվածում, բայց ոչ հասանելի, ոչ շոշափելի: Իսկ ահա ազգի հարատևման ու վեհության այդ խորհրդանիշը մեզ պատկանելու դեպքում մեր ապագան էլ ավելի շոշափելի ու վստահ կլինի: Դարերով ապրում, հուսադրվում ու վեհանում ենք երկնքին կամ Առաքելական եկեղեցու խորանի մոտ Աստծուն աղոթելով և Մասիսին նայելով՝ որպես ազգի զորության ու իմաստության խորհրդանիշի, որպես նախասկիզբ, կյանքի վերածնունդ Երկրի վրա: Եվ ահա արարումի ու ներշնչանքի այդ անսպառ ու անեզր աղբյուրը մեր ափերի մեջ չէ, մեր ձեռքերում չէ: Մի օր այն անպայման մերն է լինելու՝ միավորելով ու համախմբելով բոլոր հայերին, դարձնելով նրանց ոչ միայն աշխարհի ամենահին, այլև ամենաուժեղ ու հավերժ քաղաքակրթություններից մեկի ժառանգորդները:

– Գիզեմի նման ասեմ՝ գեղեցի՜կ ես խոսում, – ասաց ընկերս:

– Հիմա դու ո՞ւմ կողմն ես, ի՞նչ, թե՞ Գիզեմի, – կատակեցի ես:

– Ես ուզում եմ, որ քո ասածով լինի, բայց ուզում եմ տեսնել դա, թե չէ հարյուր տարի անցավ մինչև Հռոմի պապը Վատիկանում հնչեցրեց, որ Հայոց ցեղասպանությունը 20-րդ դարի առաջին ցեղասպանությունն է, երևի մի հարյուր տարի էլ կտևի, որ Ամերիկայի Նախագահին իր ելույթում արտասանի «ցեղասպանություն» բառը, – քնծիծաղով ասաց ընկերս:

– Այն, ինչը տեղի ունեցավ Վատիկանում ապրիլի 12-ին, իրոք պատմական նշանակությամբ աննախադեպ ու փառահեղ մի բան էր, որի մասին տարիներ հետո դասագրքերում են գրելու, ու մեր երեխաները գրքերից են դա սովորելու:

Իսկ թե ինչքան Կոկա-կոլա դեռ կխմվի, մինչև Ամերիկայում բոլոր նահանգները միաբերան ընդունեն ու Նախագահին էլ «ցեղասպանություն» եզրը արտասանի, կներես, արդեն էական չէ, քանի որ ինձ համար այս խնդրի լուծումը այլ է:

– Ի՞նչը, – հարցրեց ընկերս:

– Ուզո՞ւմ ես՝ ցեղասպանությունն ընդունեն, ինչ ասում ես՝ հավատան, համաձայնվեն, ուզո՞ւմ ես՝ վիշտդ կիսեն բոլորը, ուրեմն պիտի ուժեղ լինես ու զարգացած: Ուզո՞ւմ ես՝ խոսքդ լսելի լինի, ասածդ՝ կարևոր, անգամ՝ թելադրող, ուզո՞ւմ ես այլևս երբեք չցեղասպանվես ու որևէ մեկը աննշան ոտնձգություն անգամ չհամարձակվի իրականացնել քո ազգի ու պետության դեմ, քո սահմանին, ուրեմն պիտի ուժեղ լինես, հզոր, տնտեսապես զարգացած, ժողովրդագրական առումով՝ ծաղկող, բարգավաճող, «Կանք, պիտի լինենք, ու դեռ շատանանք» բանաձևը պիտի հաստատուն կերպով գործի, պիտի միական ու միասնական լինես, խելացի ու իմաստուն, հանդուրժող ու սիրող, նվիրյալ ու աշխատասեր, ստեղծագործ ու նպատակասլաց: Այ, երբ ուժեղ եղար, սահմանիդ անգամ չեն համարձակվի մոտենալ, էլ ուր մնաց, թե դիվերսիաներ ու հարձակումներ գործեն կամ ցեղասպանեն: Ուզո՞ւմ ես՝ դատդ արդար լուծվի, ցեղասպանության խնդիրն էլ մյուսների շուրթերից չիջնի, ուրեմն պիտի ուժեղ լինես:

– Ուտոպիա է, – ժպտալով ասաց ընկերս, – դու ուտապիստ ես:

– Դե, ուրեմն, ես էլ թող լինեմ վերջին ուտոպիստը, – կատակեցի ես, – երբ մեռնեմ, գերեզմանաքարիս կգրեք. «Մեռավ դարի վերջին ուտոպիստը»:

– Ոչ մի բան էլ չեմ գրի, – ծիծաղեց ընկերս, – թող դա լինի Անհայտ ուտոպիստի գերեզմանը:

– Չէ՛, ինչ մեռնել, ապրել է պետք, ապրելով է պետք պայքարել, ոչ թե նահատակվելով: Հայ ժողովուրդը ոչ թե ցեղասպանվեց, այլ ցեղասպանության միջով անցավ ու հաղթահարեց, վերածնվեց: Հայը հաղթել է ապրելով ու արարելով: Ու մի կարծիր, թե այն, ինչ ասում եմ, երազանք է, որովհետև ես խորապես հավատացած եմ... հայ ժողովուրդը խելացի ժողովուրդ է:

– Դա նաև Գիզեմին կասես, երբ տեսնես:

– Ես կզնամ տեսնելու նրան, – ասացի:

– Հա, ճիշտ կանես: Կարծում եմ՝ պետք է հարթել ամեն բան, քանի որ դեռ պիտի միասին աշխատենք, – ասաց ընկերս:

Գնացի հյուրանոցի ընդունարան ու խնդրեցի զանգահարեն Գիզեմի սենյակ: Նա վերցրեց խոսափողը, զարմացավ, որ ես եմ զանգահարել: Հարցրի, թե հարմար կլինի՞ հանդիպենք, երկու բառ փոխանակենք մինչ վաղվա հանդիպումը:

– Նա սիրով համաձայնեց, ասաց, որ քիչ հետո կջնի հյուրանոցի բար:

Եկավ: Շատ գեղեցիկ տեսք ուներ, հագել էր երեկոյան գեղեցիկ զգեստ, որն ընդգծում էր նրա մարմնի բարեկազմությունը, կանացի հմայքն ու վայելչագեղությունը, իսկ փարթամ ու երկար մուգ շագանակագույն վարսերը գարնանային թեթևությամբ թափվել ու զարդարում էին նրա գեղանի ուսերն ու իրանը: Բարի լուսավորությունը անդրադառնում էր նրա խորունկ, մուգ շագանակագույն աչքերի մեջ, ինչից աչքերը փայլում էին:

Աթոռը քաշեցի, նստեց: Ես նստեցի նրա դիմաց: Գինի պատվիրեցինք ու խորտիկներ: Երբ մատուցողը ամեն ինչը գեղեցիկ ձևով դասավորեց սեղանին, ասացի.

– Շնորհակալ եմ, որ չմերժեցիք: Անկեղծ ասած՝ մի տեսակ անհանգիստ էի Ձեզ համար և անհարմար էի զգում, որ այդպես ստացվեց, առավել ևս, երբ իմացա, որ վատ եք զգացել Ձեզ: Գիզեմ, ցավում եմ, որ նեղվեցիք: Ձեր նախնիների գործած ոճիրն էի պատմում, որը, ափսոս, չեք ընդունում: Ամեն դեպքում, ներեցեք ինձ, եթե նեղացրի Ձեզ, չէի ուզում, որ Ձեզ վատ զգաք, ես այդպիսի մարդ չեմ, որ կնոջը նեղացնեմ...

– Դուք ինձ կներեք, – ասաց Գիզեմը, – քանի որ որոշակի ոճիր ես ու իմ ժամանակակիցները նույնպես գործում ենք, որովհետև շարունակում ենք մերժել, ժխտել, հերքել...

– Հուսով եմ, որ բարի հարաբերությամբ և հարգանքով կավարտենք մեր այցն ու աշխատանքը այստեղ... Հայերն ու թուրքերը հարևաններ են, ու ինչ էլ լինի, որևէ մեկը չի պատրաստվում լքել այդ տարածաշրջանը: Քո պետությունը, – անցնելով «դու»-ի՝ շարունակեցի, – փակ է պահում սահմանը, պահում է իմ պետությանը շրջափակման մեջ՝

որոշակիորեն խոչընդոտելով մեր զարգացմանն ու արտաքին աշխարհի հետ շփմանը: Քո պետությունը չի ընդունում իր պատմության ամոթալի անցյալը, սատարում է Ադրբեջանին՝ Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի դեմ նրա կողմից իրականացվող ագրեսիայում, իսկ հայի ու թուրքի կռիվը դարերի խորք ունի, թուրքը հարձակվել է, հայը՝ պաշտպանվել: Մի խոսքով, եթե հիմա խոսենք քաղաքականությունից, կփչանա երեկոն: Ես ուղղակի ցանկացա, որ իմանաս, որ հայերը վատ մարդիկ չեն, և որ ցեղասպանության ժամանակ մեզ սպանել են ոչ թե որևէ ոճիրի կամ հանցանքի համար, այլ անմեղ տեղը, պարզապես նրա համար, որ հայ ենք եղել, կայսրությունում արարող ու ստեղծող մի ազգ, որը խանգարում էր իշխանություններին իր ունեցած հեղինակությամբ, մի քանի քայլ առաջ գնացող մտածողությամբ ու տաղանդով, իր ակտիվ էությամբ ու հմտություններով: Ես երբեք չեմ ժխտել, որ թուրքերի մեջ էլ կան պատվարժան մարդիկ, որոնք ոչ միայն համարձակություն ունեն ազատ խոսելու անցյալի մասին, այլև գործում են այդ ուղղությամբ: Հավատացած եմ, որ այս պահին, այստեղ գտնվելու ժամանակ գոնե մենք երկուսով հարգանքի ու հանդուրժողականության յուրօրինակ օազիս պիտի ստեղծենք մեր միջև, որպեսզի համաժողովից հետո միմյանցից բաժանվենք բարի հիշողությամբ: Չեմ ուզում, որ գնաս քո երկիրն ու մտածես իմ մասին որպես թշնամու: Հայը թշնամի չէ, բայց այլևս զոհ էլ չէ ու կարող է իրեն պաշտպանել:

– Երբ խոսեցիր իմ անվան մասին, կոկորդս սեղմեց, ուզեցի բան ասել՝ զսպեցի ինձ... – հանկարծ ասաց խոսքերս հիացած հայացքով լսող Գիզենը:

– Ի՞նչ... – հետաքրքրվեցի ես:

– Գաղտնիքի մասին, որ խոսեցիր...

– Այո հիշում եմ, գեղեցիկ անուն ունես, ու այդ պահին որոշեցի անվանդ նշանակությունը, դրա թարգմանությունը նշել՝ կապելով մեր գրույցին: Կներես, եթե վիրավորվել ես, ես վատ մտքով չասացի դա: Ուղղակի անունդ համընկնում էր եղածի մասին պատկերացմանը, դու լավ հիշում ես, թե ինչպես ասացի...

– Իհարկե հիշում եմ, ի՞նչ վիրավորվել, անհոգ եղիր, և կոկորդս էլ դրանից չէր, որ սեղմեց ու հուզվեցի..., – ասաց նա ու աչքերը կախեց:

– Բա ինչի՞ց, – հարցրի:

– Ես հասկացա, որ այլևս անկարող եմ պահել այն գաղտնիքը, որ կրում եմ, ու որը տանջում է ինձ: Այսօր ուղիղ նայելով աչքերիս՝ դու ասացիր այդ ամենը, ու ես զգացի, որ էլ չեմ կարող...

– Չես կարող ի՞նչ:

– Չեմ կարող չասել քեզ այն, ինչը իսկապես թաքցնում եմ: Բանն այն է, որ տատիկս հայ է, ջարդի ժամանակ անցել է այդ բոլոր արհավիրքների միջով՝ լինելով ընդամենը 16-17 տարեկան: Մի կերպ փրկվել է, հետո ընկել մի տուն, այնտեղ պահել են, զոռով մահմեդանակացրել, նա մեկն է այն հազարավոր հայ կանանցից, որոնց կրոնափոխ են արել: Միայնակ ու անօգնական աղջիկ, ի՞նչ պիտի աներ, ինչպե՞ս ընդդիմանար: Պապիկս ծանոթացել է նրա հետ ուսանողական տարիներին: Բացի պապիկիս կողմից մեր մի քանի թուրք հարազատներից, ոչ մեկը չգիտի այս մասին: Ինձ հետ այստեղ եկած մեր պատվիրակության անդամը եթե հանկարծ իմանա, ինձ համար շատ ծանր հետևանքներ կլինեն, առավել ևս, որ նա տեղից էլ շատ վատ ու չար մարդ է ու կապ ունի հատուկ ծառայությունների հետ: Ամբողջ կյանքումս թաքցրել եմ տատիկիս ազգության մասին, այլապես ոչ մի բանի չէի հասնի կյանքում, անգամ եղել են պահեր, որ ամաչել եմ, որ նա հայ է, քանի որ մանկությունից մեզ սովորեցրել են լրիվ ուրիշ պատմություն, ձևավորել հայի միանգամայն ուրիշ կերպար: Ամբողջ կյանքում սովորեցրել են ատել հային: Ջարմանալի չէր, որ լցված եմ մեղմ ասած ոչ բարությանբ հայ ազգի հանդեպ: Տատիկս էլ շատ բան չէր պատմում իր ազգային ինքնությունից, վախենում էր: Բայց երկու բան կա, որ կյանքում չեմ մոռանա... այն, թե ինչպես էր ինչ-որ մեղմանուշ հայկական մեղեդի երգում, օրորոցային, երբ քնացնում էր ինձ ու մեկ էլ այն, թե ինչպես առաջին անգամ պատմեց ինձ, որ հայ է ու պատմեց ջարդի տեսարանները, որոնք պարզորոշ հիշում էր ու ամեն անգամ վերհիշելիս՝ սարսափում: Դրա համար, երբ նկարագրեցիր այն կնոջ ու երեխայի բռնաբարության տեսարանը, էլ չկարողացա դիմանալ: Նրանց տեղը իմ տատիկը կարող էր լինել, և այդ ամենը այնպես խոցեց սիրտս, որ ուղղակի փախա լսարանից: Ահա այն գաղտնիքը, որը կրում եմ իմ մեջ կյանքիս ընթացքում: Ի դեպ, անունս տատիկս է դրել...

– Մարմինս փշաքաղվեց, – ասացի ես, հուզումի ալիք անցավ մարմնովս մեկ: – Ես չգիտեի, այ քեզ կյանքի անակնկալ:

– Հիմա դու գիտես..., – տխուր ժպտալով ու հույսով լի հայացքով ասաց Գիզեմը, – հուսով եմ...

– Անհոգ եղիր, չանհանգստանաս, միայն ես կիմանամ, կնոջ պատիվն ու անվտանգությունը, նրա հանգստությունն ու ապահովությունը իմ պատվի խնդիրն է, ես կնոջ ապահովությունն ու անվտանգությունը կյանքովս եմ երաշխավորում:

– Շնորհակալ եմ..., – խոնարհաբար ու հիացական ասաց նա:

– Իսկ տատիկդ, ծնողներդ հիմա՞...

– Տատիկս վաղուց մահացել է, ծանր հիվանդ էր՝ որպես հետևանք հոգեկան բուրք ցնցումների, որ ապրել էր: Ծնողներս նույնպես մահացել են: Ապրում եմ հորաքրոջս տանը, նա էլ հա հորդորում է, որ ամուսնանամ, ինչ եմ խելքս տվել կարիերային, – ժպտաց Գիզեմը:

– Անկեղծ ասեմ՝ այսպիսի բան, Գիզեմ, իսկապես չէի սպասում, ինչ հետաքրքիր քառուղիներ ու խաչմերուկներ ունի կյանքը, – ասացի ես, – իմացիր, ուրախ եմ, որ Քո մեջ հայի արյուն կա, այն իրեն զգացնել տվեց:

– Ինձ հենց սկզբից ձգում էր դեպի Քեզ, հարազատ բան էի զգում... Շնորհակալ եմ շատ կնոջ հանդեպ նման վերաբերմունքի համար, դու շատ վստահելի ու բարի մարդ ես, – ասաց Գիզեմը և շարունակեց, – իմ երկրում կանանց իրավունքները երբեմն ոտնահարվում են, բնակավայրեր կան, որտեղ նրանք դեռ հնուց ի վեր եկող ձայնի իրավունքից զրկված են: Որքան գիտեմ՝ հայ հասարակության մեջ պատկերն այլ է, ու մեկ էլ գիտեմ, որ հայ տղամարդիկ շատ կնամեծար են, իրենց մայրերին ուղղակի աստվածացնող: Եվ միայն կնոջը մեծարելու հարցում չէ, որ կան ակնհայտ տարբերություններ: Հայերն ու թուրքերը քաղաքակրթական տարբեր մակարդակների վրա են, և ես չեմ խուսափում ընդունել քաղաքակրթական այդ տարբերությունը... Այն, որ դու իմ վիճակի համար անհանգստացել էիր, դա էլ խոսում է կնոջ նկատմամբ քո վերաբերմունքի մասին, մեկ ուրիշը կարող էր թքած ունենալ, թե ինչպես եմ, ի վերջո, մի օր հետո ամեն մեկը գնալու է իր երկիրը ու իրար երևի մոռանալու ենք: Իսկ դու անհանգստացար, կնոջ նկատմամբ այդ բարեվարքությունը ու մեծարանքը շատ գնահատելի է:

– Գիտե՞ս, կինը այն նավահանգիստն է, որտեղ իր խաղաղությունն է փնտրում տղամարդ նավապետը, – ասացի, – նա ամեն օր հանում է իր նավը բաց ու ավելո՞ծ օվկիանոս, կռիվ տալիս ավիքների հետ: Օվկիանոսի ավելոծությունը տղամարդու համար կյանքի ամենօրյա պայքարն է, ամենօրյա եռուզեռը, անհետաձգելի ու շատ կարևոր գործերը, հարաբերությունները, աշխատանքը, լարվածությունը աշխատանքում, փող աշխատելու ու ընտանիք պահելու ամենօրյա ծախսած էներգիան, մտահոգություններն ու մտատանջումները, ծրագրերն ու անելիքները, կոնֆլիկտներն ու ձեռքբերումները, պարտություններն ու հաղթանակները: Եվ ահա, այդ ամենը տղամարդը հաղթահարում է՝ իմանալով, որ բնության մի գողտրիկ անկյունում, այնտեղ հեռվում, ինքը ունի այն նավահանգիստը, որտեղ օրվա վերջում կբերի իր նավը ու կկանգնեցի այն, կիջեցնի առագաստները ու կվերագտնի ներքին ներդաշնակությունը, հանգստությունը, խաղաղությունը, կլիցքավորվի ու կվեհանա:

– Մարդ լսում է քեզ ու խաղաղվում... ասում էի, էլի, որ գեղեցիկ ես խոսում, – ժպտալով ասաց Գիզենը: – Շնորհակալություն, որ կարողացա քեզ վստահել ու ասել այն, ինչ թաքցնում էի. այդ վստահությունը տեսա քո մեջ: Եվ շնորհակալություն, որ կնոջ մասին այդպես ես խոսում:

– Ինձ համար կինը ավելին է, քան իգական սեռը, – շարունակեցի, – ինձ համար կինը Արարչի ստեղծագործության ու բնության արարչագործության պսակն է, տիեզերքի ամենագեղեցիկ էակը, որն ինքը կյանքն է և նաև կյանք պարզևողը: Կինը ոչ թե սոսկ գեղեցիկ սեռի ներկայացուցիչ է ինձ համար, այլ ամբողջ աշխարհը, ներշնչանքի ամենակարևոր աղբյուրը: Ես միշտ ուշադիր նայում ու հետևում եմ, թե այս կամ այն տղամարդն ինչպես է վերաբերվում կնոջը, քանի որ ինձ համար վերաբերմունքը կնոջ նկատմամբ վերաբերմունքն է ամբողջ աշխարհի, ամբողջ շրջակա միջավայրի, կյանքի, իրերի ու երևույթների նկատմամբ: Կնոջ նկատմամբ տղամարդու վերաբերմունքից կարելի է դատել սիրո, բարության, բնության, գեղեցիկի, ազնիվի ու արդարի նկատմամբ նրա վերաբերմունքի, կյանքի ու աշխարհի գեղագիտական ընկալման մակարդակի մասին:

– Ես շնորհակալ եմ քեզ, որ գեղեցիկ բացահայտումներ արեցիր ինձ համար, թե ինչպիսին պիտի լինի և կարող է լինել տղամարդը կնոջ նկատմամբ, – ասաց Գիզեմը:

Մեր հաճելի գրույցը շարունակվեց մինչև ուշ երեկո: Ընկերացանք նաև սոցիալական կայքում: Ես նրա մասին շատ բան իմացա, աղջիկն այնքան շնորհներ ու հետաքրքրություններ ուներ, որ հաճելիորեն զարմացել էի: Բացի այդ, նա աչքի էր ընկնում գրագիտությամբ, առողջ դատողությամբ ու ներքին բարձր կուլտուրայով: Զրույցի ընթացքում ես նրան հրավիրեցի Երևան, առավել ևս, որ մի քանի օրից ապրիլի 24-ն էր, ու լավ առիթ կլիներ նրա համար՝ այցելելու նաև Ծիծեռնակաբերդ: Վերջում ձանապարհեցի նրան մինչև իր համարը և վերադարձա բար:

Հաջորդ օրվա քննարկման ժամանակ բավականին հետաքրքիր բանավեճեր ծավալվեցին: Գիզեմը ևս մասնակցում էր, բնականաբար, ակտիվորեն պաշտպանելով իր երկրի շահերը, այլ կերպ նա չէր կարող:

Համաժողովի փակման օրը, ինչպես արդեն հայտնի էր, յուրաքանչյուր խումբ հանդես պիտի գար զեկուցմամբ: Մեր խմբից ընտրել էինք որպես զեկուցող հենց Գիզեմին: Նախորդ օրը խմբի աշխատանքի ժամանակ մշակեցինք ու պատրաստեցինք նաև «*Power Point*»-ը, որպեսզի Գիզեմը սլայդներով ցույց տա քննարկված թեմաների վերաբերյալ մեր խմբի երկօրյա քննարկումների արգասիքը, հարցերի վերաբերյալ մեր մոտեցումները, եզրահանգումներն ու առաջարկությունները:

Գիզեմը մոտեցավ ամբիոնին: Ելույթի ժամանակ, երբ հասավ Հայոց ցեղասպանության թեմային, անսպասելիորեն ինձ և շատ-շատերի համար, նա ասաց.

– ...Այն ժամանակ դաժանորեն սպանվեց ավելի քան մեկ ու կես միլիոն մարդ, հարյուր հազարավոր հայեր ստիպված եղան լքելու իրենց Հայրենիքն ու սփռվելու աշխարհով մեկ: Սակայն, անգամ ցեղասպանությունից հետո հայերը չկորցրին հավատը Աստծո, սիրո, բարության ու արդարության նկատմամբ և իրենց մեջ ուժ ու կորով գտան ապրելու, արարելու և հաղթելու՝ պաշտպանելով Հայրենիքը: Հայերը հին, տաղանդավոր, խաղաղասեր, քրիստոնյա ժողովուրդ են՝ բացառիկ մշակույթով:

Ընկերս, որը կողքիս էր նստած դահլիճում, ականջիս կատակով շշնջաց.

– Ախպե՞րս, էս երեկ չլինի՞ ձեր միջև բան-ման...

– Իհարկե՛ չէ, ուղղակի հիմա իր խղճով առաջնորդվեց, – պատասխանեցի ես, – ելույթում դա նախատեսված չէր, իրենից ասաց էդ խոսքերը, ես պատկերացնում եմ, թե ինչ կաթված է հիմա ստանալու նրա կուլեգան:

– Ասա՛ չհալածեն էս խեղճ աղջկան, – ասաց ընկերս:

Երբ ելույթը ավարտվեց, Գիզենը ժպտաց ինձ ու նստեց իր աթոռին: Ես նկատեցի նրա թուրք գործընկերոջ կատաղած ու այլայլված հայացքը:

Աննկատ բուլորից, ես սմարթֆոնի միջոցով «Մեսինջերով» գրեցի նրան հետևյալը.

– Ինչի՞ արեցիր, բա որ հիմա քեզ հալածեն: Եթե կուլեգադ սպառնա քեզ կամ նեղացնի՝ կասես:

Գրեց՝ «OK»:

Հիմնական ու ամփոփիչ զեկուցումներից հետո մասնակիցներին ելույթի իրավունք տրվեց: Բուլոր նրանք, ովքեր կցանկանային արտահայտվել, ունեին այդ հնարավորությունը: Ես նույնպես կարճ շնորհակալական ելույթ ունեցա՝ խոսքիս մեջ շնորհակալությունս հայտնելով համաժողովի կազմակերպիչներին և հատուկ նշեցի իմ թուրք գործընկերուհուն՝ Հայոց ցեղասպանության անմեղ զոհերի մասին բարեխղճորեն ու հարգանքով արտահայտվելու համար և վերջում ասացի.

– Այս Երկրի վրա մենք բուլորս պետք է ապրենք խաղաղության ու համերաշխության մեջ, արդարության ու հանդուրժողականության մեջ, ներդաշնակության մեջ ինքներս մեզ, բնության և աշխարհի հետ, պետք է ապրենք սիրով ու հավատով:

Համաժողովն ավարտվեց, բուլոր պատվիրակությունները մեկը մյուսի հետևից լքեցին հյուրանոցը, ժամանած հյուրերի համարներում իրար հետևից «Chek out» էր արվում:

Մեր Հայաստան վերադառնալու ժամն էլ էր: Հրաժեշտ տվեցինք միմյանց՝ նորից հանդիպելու ակնկալիքով: Պայմանավորվեցինք կապ պահել Ֆեյսբուքում, փոխանակեցինք «E-mail» հասցեներ:

Անցավ մոտ մեկ շաբաթ, երբ Գիզենը հերթական ֆեյսբուքյան նամակում գրեց, որ գալիս է Երևան: Նա միացել էր ինչ-որ լրագրողական խմբի ու ժամանելու էր երկու օրով: Խուճընը պետք է լուսաբաներ ապրիլի 24-ը: Պայմանավորվեցինք, որ ես նրան կդիմավորեմ:

Ապրիլի 23-ի երեկոյան ժամանեցին, օդանավակայանից տեղափոխվեցին «Արմենիա Մարիոթ» հյուրանոց: Նույն օրը երեկոյան նրան հրավիրեցի ընթրիքի՝ հյուրընկալության բոլոր կանոններով պատվելով հայի ու Հայաստանի նկատմամբ արդեն խորը համակրանքով ու հարգանքով լցված հյուրին:

Հաջող օրը Ծիծեռնակաբերդում էինք: Վերցնելով ծաղիկներ՝ սկսեցինք երթը: Գիզենը մի քիչ առանձնացավ իրենց խմբից, ու մենք միասին քայլելով բարձրանում էինք: Շուրջը «բարձր հնչող» լռություն էր տիրում, և այդ պահին ականայից հիշեցի Պարույր Սևակին՝ «Ամեն սերունդ, նախ և առաջ, մտածում է լռության մեջ»:

Ճանապարհին ես Գիզենին պատմում էի, որ այս օրը ամբողջ հայ ժողովուրդը գրեթե մեկ մարդու պես «ուխտի է ելնում»: Օրվա խորհուրդը հավերժ է, իսկ դրա արթնացրած հուշերը՝ չմարող ու մշտապես թարմ: Օր, որը միավորում է աշխարհասփյուռ հայությանը, օր, երբ մի կողմ են դրվում քաղաքական հայացքներն ու տարածայնությունները, հոգսերն ու խնդիրները, սրտնեղություններն ու վեճերը, և վերջապես օր, որը, որպես վառ փարոս, հայերի սրտերում անմար է պահում պատմական արդարության վերականգնման մղումը: Գիզենին պատմում էի, որ ահա այսպես, մինչև ուշ երեկո մարդկանց հոժ բազմությունը շարժվելու է դեպի Ծիծեռնակաբերդի բարձունքը:

Տիրում էր մի խորհրդավոր լռություն: Մարդիկ, հազարավոր մարդիկ, լուռ ու հանդարտ քայլող մարդիկ, որոնց մեջ Թուրքիայի քաղաքացի մի օրիորդ, մի թրքուհի՝ իր սրտի տակ հայի սրտի բաբախյունով:

Ծիծեռնակաբերդ եկած մարդիկ իրենց հետ բերել էին առօրյա հոգսերը, անհաջողությունները, մտածմունքը, այնուամենայնիվ, մի պահ նրանք բոլորը մտածում էին մի բանի մասին:

Եվ ահա, լուռ մի բազմություն, որ քայլում է Մոցարտի, Բեթհովենի, Բախի և այլ հանճարների երաժշտության հնչյունների ներքո: Լուռ մի բազմություն, և մենք նրա մեջ՝ որպես մի մասնիկ, մի անդամ, մի «-ություն»:

Չափազանց հետաքրքիր է մարդկանց այդ բազմության ընթացքը: Երբ դու քայլում ես նրա ուղղությանը համընթաց, քեզ թվում է, թե դու այդ բազմության մի մասն ես, սակայն, երբ քայլում ես բազմությանը հակառակ... Հուշարձան հասնելուց հետո մենք վերադարձանք նույն ճանապարհով, որով եկել էինք, որպեսզի հատուկ ու աննկատ կերպով հնարավորություն ստեղծեն Գիզեմի համար՝ զննելու մարդկանց հայացքները:

Ես օգտվեցի իմ վկայականից և կարողացա, այսպես ասած, թեթևակի խախտել կարգը, որպեսզի օտարազգի հյուրերի խմբի համար բացառիկ նյութ պատրաստելու, բացառիկ դիտարկումներ անելու հնարավորություն ստեղծեն:

Մենք սկսեցինք իջնել բազմությանը հակառակ՝ նայելով մարդկանց, որ քայլում էին մեզ ընդառաջ: Դեմքե՛ր, դեմքե՛ր, տխուր ու լուռ, լիքը, խորը: Ուշագրավ է, որ մինչև Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ մտնելը մարդկանց դեմքերն ուրիշ արտահայտություն ունեին: Այլ էր պատկերը թանգարանից դուրս գալուց հետո: Խոր վիշտ էր համակում մարդկանց սրտերը, և Եղեռնի սահմնկեցուցիչ տեսարաններն ասես դրոշմվում էին նրանց աչքերում:

Քայլում էինք ու դիտում ընդառաջ եկող հազարավոր մարդկանց: Աննկարագրելի մի զգացում էր. կարծես առջևդ անցնում էր մի ամբողջ ժողովուրդ՝ քո դիմաց, անհատ առ անհատ: Լռություն էր, «բարձր հնչող» մի լռություն: Կողքովս անցնում էր սերունդների լուռ մի զանգված, ու այդ զանգվածը մտածում էր՝ համախմբվելով մի ընդհանուր գաղափարի շուրջ, մի ընդհանուր ողբերգության շուրջ:

Մեզ հետ քայլող թուրք լրագրողուհիներից մեկը մի քանի հարց տվեց ինձ, ու ես նրան պարզաբանումներ տվեցի, որպեսզի ավելի տեղեկացված լինի: Խոսքի մեջ նշեցի նաև Գարեգին Նժդեհի խոսքերը, որ Հայրենիքը ծննդավայր չէ, Հայրենիքը պատասխանատվություն է, և շարունակեցի.

– Ահա այդ պատասխանատվության զգացումն է համակել այս բազմությանը, հայ բազմությանը՝ միասնաբար, միակամ ու համախմբված լուծելու ազգային բոլոր խնդիրները, կերտելու ուժեղ, բարեկեցիկ, շենացող երկիր, ճանաչել տալու իր վիշտը և պահանջելու դատապարտում ու արդարացի հատուցում:

– Եթե իրոք այնպես է, ինչպես Դուք եք ասում, – նկատեց լրագրողուհիներից մեկը, ապա մենք այժմ այն բազում «երջանիկներից» ենք, որոնք ներկա են այս համազգային զարթոնք ու միասնականություն մարմնավորող ոգեղենության «տոնին»:

Ապրիլի 24-ի երեկոյան խումբը մեկնում էր: Ես գնացի օդանավակայան, քանի որ հյուրանոցից Գիզեմին ու գործընկերներին կազմակերպիչները միկրոավտոբուսներով տեղափոխելու էին Ջվարթնոց: Օդանավակայանում մենք մի քանի բառ փոխանակեցինք, իմացա, որ այն համաժողովից հետո նրա նկատմամբ սկսվել են որոշակի ճնշումներ, ստիպված էր եղել դուրս գալ աշխատանքից, տեղավորվել էր լրատվական դաշտում որպես լուրերի համակարգող և մտադիր էր մեկնել Գերմանիա՝ այլևս չկարողանալով ապրել իր երկրում՝ ճնշվածի ու հետապնդվողի հոգեբանությամբ: Ես նրան սրտանց հաջողություն մաղթեցի, վստահություն հայտնեցի, որ ամեն ինչ լավ կլինի, քանի որ նա խելացի, բարեշնորհ ու նպատակասլաց մարդ է: Ասացի, որ միշտ հիշի, որ լավ բարեկամ ունի Հայաստանում, և հույս հայտնեցի, որ մի օր էլի կհանդիպենք, ու որ կգա այն օրը, երբ ինքը չի ամաչի իր պետության համար, երբ նայելիս լինի հայի աչքերին:

Գիզեմը, աչքերը լցրած, բարեկամաբար գրկեց ինձ, հրաժեշտ տվեցինք իրար, «բարի ճանապարհ» մաղթեցի: Երբ անձնագիրը ցույց տվեց ու թեքվեց, որ ներս անցնի, շրջվեց, թախծոտ ժպիտով նայեց ինձ ու գնաց՝ իր հետ տանելով իր գաղտնիքը:

ԱՌԼԵՆ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ԹՐՔՈՒՀՈՒ ԳԱՂՏՆԻՔԸ

Խմբագիր՝
Արմինե Մովսիսյան

Տեխնիկական խմբագիր՝
Վահե Խալաֆյան

Շապիկի մտահղացումը և ձևավորումը,
համակարգչային շարվածքը՝
Առլեն Շահվերդյանի

Շապիկի պատկերը՝ ըստ <http://thecutestblogontheblock.com/wp-content/uploads/2011/11/midnight-masquerade-2c-free-vintage-mask-blog-background.jpg>

Հեղինակի անձնական բլոգ-կայք՝
<http://arlenshah.wordpress.com>

Էջ «Facebook»-ում՝ <https://www.facebook.com/ArlenShahverdyan>

Էջ «Twitter»-ում՝ https://twitter.com/A_Shahverdyan

Էլ. փոստ՝ shahverdyan.arlen@gmail.com

© Բոլոր իրավունքները պաշտպանված են, 2015

© All Rights Reserved, 2015